



**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն  
Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219, 094 40 46 24,  
E-mail: [info@hetq.am](mailto:info@hetq.am), [hetq@hetq.am](mailto:hetq@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

21.03.2017թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ

Աշոտ Ղահրամանյանին

Հարգելի պարոն մարզպետ, հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9 և 12-րդ հոդվածների պահանջները, խնդրում եմ տեղեկատվություն տրամադրել այն մասին, թե Արմավիրի մարզպետարանի աշխատակազմից (ներառյալ՝ մարզպետը, փոխմարզպետերը) քանի աշխատակից/պաշտոնյա է արձակուրդ վերցրել (կամ այդ մասին դիմում ներկայացրել)՝ նախընտրական այս շրջանում որեւէ կուսակցության քարոզչությանը, նախընտրական շտաբների աշխատանքների մասնակցելու նպատակով:

Խնդրում եմ տրամադրել տվյալ պաշտոնյաների/աշխատակիցների ցանկը եւ պաշտոնը:

Ինչպես նաեւ՝ խնդրում եմ տրամադրել այն պաշտոնյաների/աշխատակիցների ցանկը, որոնք այս պահին կամ առաջիկա մեկ-մեկուկես ամսվա համար ներկայացրել են արձակուրդի մասին դիմում՝ անկախ պատճառներից:

Խնդրում եմ տրամադրել տվյալ պաշտոնյաների/աշխատակիցների ցանկը եւ պաշտոնը:

Կանխավ շնորհակալություն,

«Հետաքննող լրագրողներ» էլեկտրոնային  
պարբերականի լրագրող  
Գագիկ Աղբալյան

